ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.31/39735-2025

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-1185-10.11.2025-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2025 թվականի դեկտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1119-Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Ագնեսա Առաքելյան
Ազգային ժողովի հետ կապերի վարչություն
Հեռ. 515403
Էլ փոստ՝ agnesa.arakelyan@gov.am

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-1185-10.11.2025-ՊԻ-011/0) **ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ**

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Զարուհի Բաթոյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունը սկզբունքային առարկություններ չունի:

Միաժամանակ, հարկ է նշել, որ նախագծի հիմնավորումն ընդհանրական հղում է պարունակում «Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպության տրամադրած տվյալների վերաբերյալ, ուստի առաջարկում ենք հիմնավորման մեջ ներառել նաև մոտավոր ֆինանսական հաշվարկ՝ առաջարկվող կարգավորումների հնարավոր ազդեցությունը գնահատելու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունման հետ կապված՝ պետական բյուջեի եկամուտների էական նվազեցման կամ ծախսերի ավելացման վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է պետական տուրքից ազատել «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի համաձայն ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց՝ հետևյալ դեպքերում.

- «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքով նախատեսված նախազգուշացումը կամ անհետաձգելի միջամտության որոշումը վերացնելու վերաբերյալ դատարանի վճիռների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներով,
- ամուսնալուծության վերաբերյալ հայցերով,
- ծնողական իրավունքների իրականացման, ներառյալ երեխայի բնակության վայրը որոշելու, երեխայի հետ տեսակցության կարգ սահմանելու, երեխայի հետ շփվելու, երեխայի խնամքին, դաստիարակությանն ու կրթությանը մասնակցելու վերաբերյալ հայցերով,
- հայրությունը որոշելու վերաբերյալ հայցերով,
- ծնողական իրավունքները սահմանափակելու, ծնողական իրավունքներից զրկելու վերաբերյալ հայցերով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ Նախագծի ընդունումը կարող է հանգեցնել ՀՀ պետական բյուջեի եկամուտների նվազեցման:

Ինչ վերաբերում է պետական բյուջեի ծախսերի ավելացմանը, ապա հայտնում ենք, որ Նախագծի ընդունումը չի հանգեցնի ՀՀ պետական բյուջեի ծախսերի ավելացման:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-1185-10.11.2025-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 14.1-րդ եւ 14.2-րդ կետերով՝

«14.1) «Ընտանեկան եւ կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան եւ կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի համաձայն ընտանեկան եւ կենցաղային բռնության ենթարկված անձինք՝ «Ընտանեկան եւ կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան եւ կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքով նախատեսված նախազգուշացումը կամ անհետաձգելի միջամտության որոշումը վերացնելու վերաբերյալ դատարանի վճիռների դեմ վերաքննիչ եւ վճռաբեկ բողոքներով:

14.2) «Ընտանեկան եւ կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան եւ կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի համաձայն ընտանեկան եւ կենցաղային բռնության ենթարկված անձինք՝

ա. ամուսնալուծության վերաբերյալ հայցերով.

բ. ծնողական իրավունքների իրականացման, ներառյալ երեխայի բնակության վայրը որոշելու, երեխայի հետ տեսակցության կարգ սահմանելու, երեխայի հետ շփվելու, երեխայի խնամքին, դաստիարակությանն ու կրթությանը մասնակցելու վերաբերյալ հայցերով.

գ. հայրությունը որոշելու վերաբերյալ հայցերով.

դ. ծնողական իրավունքները սահմանափակելու, ծնողական իրավունքներից զրկելու վերաբերյալ հայցերով.»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ընթացիկ իրավիճակը **և** իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են հայցվորները՝ «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված **պաշտպանական որոշման վերաբերյալ հայցերով:** Մինչդեռ, մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ընտանեկան և կենցաղային բռնություն (այսուհետ՝ բռնություն) գործադրած անձանց կողմից վարչական դատավարության կարգով բողոքարկվում են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության (այսուհետ՝ Ոստիկանություն) կողմից կիրառված **պաշտպանության միջոց նախազգուշացումն ու անհետաձգելի միջամտության մասին որոշումները,** ըստ այդմ՝ դատարանների կողմից նշված պաշտպանության միջոցները վերացնելու վերաբերյալ դատական ակտ կայացվելու դեպքում բռնության ենթարկված անձինք, իրենց հերթին, **ստիպված են նախ վերաքննության, ապա՝ վճռաբեկության կարգով բողոքարկել վարչական դատարանների դատական ակտերը:** Հետևաբար՝ բռնության ենթարկված անձանց միայն պաշտպանական որոշման վերաբերյալ հայցերով պետական տուրքի վճարումից ազատելը բավարար չէ այդ անձանց դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման տեսանկյունից:

Բռնության ենթարկված անձանց դատական պաշտպանության իրավունքի իրացման հիմնախնդրի տեսանկյունից հետաքրքիր է **պաշտպանական որոշումների վերաբերյալ հայցերի վիճակագրությունը:** Այսպես՝ 2023 թվականի 14 գործերի համեմատությամբ՝ 2024 թվականին Հայաստանի Հանրապետության

ընդհանուր իրավասության դատարանների՝ պաշտպանական որոշումների վերաբերյալ ստացված գործերի թիվը կազմել է 44, **այսինքն՝ այդ գործերի թիվն ավելացել է շուրջ 3.5 անգամ:** Սրանք այն հայցերն են, որոնցով, ինչպես արդեն նշել ենք, բռնության ենթարկված անձինք արդեն իսկ ազատված են պետական տուրքից: Մեր կարծիքով, մեկ տարվա կտրվածքով այդ հայցերի բազմապատիկ աճը մասամբ կարելի է բացատրել նաև բռնության ենթարկված անձանց պետական տուրքի գծով սահմանված արտոնության հանգամանքով: Անդրադառնալով հատկապես անհետաձգելի միջամտության մասին որոշումների[1]՝ բռնության գործադրած անձանց կողմից դատական կարգով բողոքարկումների թվին՝ հարկ ենք համարում նշել, որ 2023 և 2024 թվականների վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ դրանց թիվը տարեկան շուրջ 30 է, որից՝ բռնության ենթարկված անձանց կողմից վերաքննիչ և վճռաբեկ բողոքարկումների թիվը՝ էլ ավելի պակաս: Այսինքն՝ նախազգուշացումը կամ անհետաձգելի միջամտության որոշումը վերացնելու վերաբերյալ դատարանի վճիռների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներով պետական տուրքի վճարումից ազատելու ձևով պետական տուրքի գծով արտոնություններ սահմանելը, հաշվի առնելով, դրանց փոքր թիվը պետական բյուջեի մուտքերի վրա որևէ էական ազդեցություն չունենալով հանդերձ՝ **կապահովվի բռնության ենթարկված անձանց՝ պետությունից արդյունավետ և լիարժեք դատական պաշտպանություն ստանալու իրավունքի առավել լիարժեք իրացումը:**

Բացի այդ՝ բռնության ենթարկված անձանց համար պետական տուրքի վճարման տեսքով ֆինանսական զգալի բեռ է առաջանում նաև քաղաքացիական դատավարության կարգով ամոանա-ընտանեկան առանձին վեճերով հայցերի ներկայացումը, օրինակ՝ ամուսնալուծության, երեխայի բնակության վայրը որոշելու, երեխայի հետ տեսակցության կարգ սահմանելու, ծնողական իրավունքները սահմանաւիակելու, ծնողական իրավունքից զրկելու և այլն: Պետական տուրքը կարող է կրկնապատկվել կամ բազմապատկվել մեկ հայցադիմումում միմյանց հետ կապված մի քանի պահանջներ միացնելու դեպքում կամ, օրինակ, նույն հայցով, մեկից ավելի երեխաների դեպքում, երեխաների բնակության վայրը որոշելու հայցերով: Լրացուցիչ՝ պետական տուրք է գանձվում նաև հայցվորի կողմից հայցի առարկան փոփոխելիս:

Ամոանա-ընտանեկան իրավահարաբերություններից բխող այլ հայցերի վերաբերյալ պաշտոնական վիճակագրություն հնարավոր չէ ներկայացնել՝ պայմանավորված այն հանգամանքով, որ այդ դատական գործերով Հայաստանի Հանրապետությունում տարբերակված վիճակագրություն չի վարվում՝ ըստ բռնության ենթարկված անձանց: Սակայն, հատկանշական է, որ «Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպության տրամադրած տվյալների համաձայն՝ 2021 թվականից մինչև 2025 թվականի հունիսի 25-ն ընկած

[1] **Նախազգուշացումների վերաբերյալ վիճակագրական տվյալներ առկա չեն:**

ժամանակահատվածում ընտանեկան բռնության ենթարկված 324 անձ դատարան չի դիմել գումար չունենալու պատճառով: Կանանց աջակցման կենտրոնի նույն ժամանակահատվածի համար 6,945 շահառուների հաշվով մասնավոր՝ քաղաքացիա-իրավական բնույթի գործերի թիվը 1157 է, ամուսնալուծություններինը՝ 489, երեխայի խնամքի վերաբերյալ գործերինը՝ 260, ալիմենտինը՝ 511:

Դատական գործընթացներում ընտանեկան բռնության ենթարկված անձանց համար իրենց իրավունքների դատական պաշտպանության ժամանակ առաջանում են նաև այլ ֆինանսական պարտավորություններ, մասնավորապես՝ փորձաքննության և թարգմանության հետ կապված ծախսեր, գործի քննության հետ կապված փաստաբանի խելամիտ վարձատրության գումարներ և այլն: Այսպես՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013 թվականի թիվ 33/3-Ա որոշմամբ հաստատված գնացուցակի համաձայն՝ ամոանա-ընտանեկան իրավահարաբերություններից բխող հայցերով փաստաբանների միջին հոնորարը տատանվում է 100,000-300,000 ՀՀ դրամի սահմաններում: Հատկանշական է, որ թեպետ ընտանեկան բռնության ենթարկված անձինք անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք ունեն, սակայն, ինչպես ցույց են տալիս Փաստաբանների պալատ մեր կատարած հարցմանն ի պատասխան ստացված տվյալները, ամբողջ 2024 թվականի ընթացքում ընդամենը 7 անձ է (յոթն էլ կին) դիմել Փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակ՝ անվճար իրավաբանական օգնություն ստանալու խնդրանքով:

Այսպիսով՝ արդեն իսկ ծանր հոգեբանական և սոցիալական վիճակում գտնվող բռնության ենթարկված անձինք հայտնվում են կրկնակի անբարենպաստ և խոցելի պայմաններում: Ֆինանսական ծախսերը հաճախ խոչընդոտում են նրանց՝ կա՛մ դատարան դիմելու, կա՛մ դատական ակտերը վերաքննության ու վճռաբեկության կարգով բողոքարկելու նրանց հնարավորությունը, ինչը վերջն արդյունքում նրանց զրկում է պետությունից արդյունավետ և լիարժեք դատական պաշտպանություն ստանալու իրավունքից:

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն (անգլերեն՝ «Committee on the Elimination of Discrimination against Women»), որ հետևում է Կոնվենցիայի իրականացմանը, Հայաստանի Հանրապետության կառավարության յոթերորդ պարբերական զեկույցի քննարկման ժամանակ, ի թիվս այլ հանձնարարականների, առանձնացրել է հետևյալը. «Ապահովել կանանց և աղջիկների արդարադատության համակարգին լիարժեք հասանելիությունը՝ ներառյալ դատավարական ողջամիտ պայմանավորումների կիրառումը, ինչպես նաև խրախուսել նրանց դիմել իրավապահ մարմիններին գենդերային բռնության դեպքերի մասին հաղորդելու նպատակով՝ տրամադրելով մատչելի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև անվճար

իրավաբանական օգնություն: Թեթևացնել բողոք ներկայացնողների ապացուցման բեռը, ապահովել դատաբժշկական ապացույցների մատչելիությունը և շարունակել բարելավել դատավորների, դատախազների, ոստիկանության ու այլ իրավապահ մարմինների ներկայացուցիչների կարողությունները գենդերային զգայունության սկզբունքներին համապատասխան՝ հետաքննության և հարցաքննության մեթոդների կիրառման հարցում:» (Մաս 19-րդ):

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն հանցագործությունից տուժած անձանց իրավունքների, ծառայությունների և աջակցության մասին իր CM/Rec(2023)2 հանձնարարականում, անդրադառնալով արդարադատության մատչելիության խոչընդոտներին և աջակցության հիմնախնդրին, նշել է, որ արդարադատության մատչելիությունը բարելավելու և տուժողների՝ իրավասու քաղաքացիական, քրեական և այլ համապատասխան դատական ատյաններին և աջակցող կազմակերպություններին դիմելու նպատակով անդամ պետությունները պետք է ուսումնասիրեն այն բոլոր խոչընդոտները, եթե այդպիսիք առկա են, որոնք խոչընդոտում են տուժողներին՝ այդ ատյաններին և աջակցության ծառայություններին դիմելու կամ սահմանված ձևի բողոք ներկայացնելու հարցում, ինչպես նաև առավելագույնս նվազեցնել նմանատիպ ցանկացած խոչընդոտ (Հոդված 3-րդ(1)):

Նկատի ունենալով վերոգրյալը, անհրաժեշտություն է առաջացել լրացումներ կատարել «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

Առաջարկվող կարգավորման բնույթը

Նախագծով առաջարկվում է լրացումներ կատարել «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասում՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատելու արտոնություններ նախատեսելով ընտանեկան բռնության ենթարկված այն անձանց համար, ովքեր հանդես են գալիս՝

- նախազգուշացումը կամ անհետաձգելի միջամտության որոշումը վերացնելու վերաբերյալ դատարանի վճիռների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներով.
- ամուսնալուծության վերաբերյալ հայցերով.
- ծնողական իրավունքների իրականացման, ներառյալ երեխայի բնակության վայրը որոշելու, երեխայի հետ տեսակցության կարգ սահմանելու, երեխայի հետ շփվելու, երեխայի խնամքին, դաստիարակությանն ու կրթությանը մասնակցելու վերաբերյալ

հայցերով.

- հայրությունը որոշելու վերաբերյալ հայցերով.
- ծնողական իրավունքները սահմանաւիակելու, ծնողական իրավունքներից զրկելու վերաբերյալ հայցերով:

Ակնկալվող արդյունքը

Օրենքի ընդունման արդյունքում պետական տուրքի վճարումից ազատելու ձևով պետական տուրքի գծով արտոնություններ կսահմանվեն ընտանեկան բռնության ենթարկված այն անձանց համար, ովքեր հանդես են գալիս նախազգուշացումը կամ անհետաձգելի միջամտության որոշումը վերացնելու վերաբերյալ դատարանի վճիռն երի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներով, ինչպես նաև ամուսնալուծության, ծնողական իրավունքների իրականացման, ներառյալ երեխայի բնակության վայրը որոշելու, երեխայի հետ տեսակցության կարգ սահմանելու, երեխայի հետ շփվելու, երեխայի խնամքին, դաստիարակությանն ու կրթությանը մասնակցելու, հայրությունը որոշելու, ծնողական իրավունքները սահմանափակելու, ծնողական իրավունքներից ղրկելու վերաբերյալ հայցերով: Վերջն արդյունքում՝ կապահովվի բռնության ենթարկված անձանց՝ պետությունից արդյունավետ և լիարժեք դատական պաշտպանություն ստանալու իրավունքի առավել լիարժեք իրացումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N1119-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ
(ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Աննա Կարապետյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-1185-10.11.2025-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

04.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ